	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	Անսաթիվ 11.01.2007	Խմբագրություն 1	2/20

Գլխավոր տնօրենի տեղակալ  
Գլխավոր Հաշվապահ  
Տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումներ

**Փոփոխություններ**

**1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1.1 Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության մշակման հիմքում դրված են հաշվապահական հաշվառման ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառմանը վերաբերվող այլ օրենքների, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից համատեղ ընդունված «ՀՀ տարածքում գործող բանկերի հաշվապահական հաշվառման հաշիվների պլանը և մեկնաբանությունները» իրավական ակտի և այլ իրավական ակտերի հիմնական պահանջները:

1.2. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունն իր մեջ ներառում է այն կոնկրետ սկզբունքները, հիմունքները, եղանակները, կանոնները, ձևերը, ռազմավարական ծրագրերը /ստրատեգիական ուղղությունները/, հրամանները, որոշումները, ընթացակարգերը և այլ ակտերը, որոնք ընդունվում են Բանկի կողմից՝ հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման համար:

1.3. Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետագայում չի փոփոխվելու, բացառությամբ այն դեպքերի, երբ տեղի կունենան էական փոփոխություններ Բանկի գործառնությունների բնույթում կամ հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխության միջոցով կտրվի առավել էական տեղեկատվություն կամ հաշվապահական հաշվառման կարգավորող օրենսդրության մեջ տեղի կունենան փոփոխություններ:

**2. ՆՊԱՏԱԿԸ**

2.1 Բանկի ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, հաշվեկշռային, արտահաշվեկշռային և ծանուցման հաշիվներում հաշվառելու նպատակով, Բանկի ղեկավարությունն ընտրում և կիրառում է այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և նրանցում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

2.2 Հատուկ պահանջի բացակայության դեպքում Բանկի ղեկավարությունը կիրառում է հետևյալ քաղաքականությունը.

Ֆինանսական հաշվետվությունների ամբողջ փաթեթում պարունակվող և ներկայացվող տեղեկատվությունը պետք է լինի.


ա) տեղին՝ օգտագործողների կողմից որոշումներ ընդունելու համար

բ) արժանահավատ՝ այն առումով, որ այն.

- ճշմարիտ ներկայացնի Բանկի գործունեության արդյունքները և ֆինանսական վիճակը արտացոլի ոչ միայն իրավական ձևը, այլև իրադարձությունների և գործառնությունների տնտեսական բովանդակությունը
- չեզոք՝ այսինքն գերծ կանխակալությունից
- հաշվենկատ

ամբողջական՝ բոլոր էական դրսևորումներում

2.3. Հաշվապահական հաշվառման կոնկրետ ստանդարտի և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերի բացակայության դեպքում, Բանկի ղեկավարությունը, ելնելով նպատակահարմարությունից և

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>3/20</i>

օբյեկտիվ անհրաժեշտությունից, հանձնարարում է Բանկի համապատասխան կառուցվածքային /ենթակառուցվածքային/ և կամ տարածքային ստորաբաժանմանը՝ մշակելու և ներկայացնելու Բանկի ղեկավար մարմինների հաստատմանը՝ Բանկի ակտիվներին, պարտավորություններին, սեփական կապիտալին և այլ հարցերին վերաբերվող կանոնակարգման ենթակա հարցերը, որով կապահովվի Բանկի հաշվապահական հաշվառման ներդաշնակ քաղաքականության վարումը, ինչպես նաև՝ Բանկի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին օգտակար տեղեկատվության տրամադրումը:

**3. ԲԱՆԿԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ**

**3.1 Կանխիկ դրամական միջոցներ**

3.1.1 Բանկի կանխիկ դրամական միջոցների փաստացի ներհոսքի /մուտքագրումը/ և կամ արտահոսքի /ելքագրումը/ ձևակերպումը կատարվում է արժույթների անվանական արժեքով, Բանկի կողմից ընդունված դրամարկղային գործառնությունները կանոնակարգող ներքին ակտով, կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կանոնակարգերով, ինչպես նաև այլ իրավական ակտերով՝ նախատեսված և պատշաճորեն ձևակերպված վճարահաշվարկային փաստաթղթերի հիման վրա:

3.1.2 Բանկը գործառնական գործունեության արդյունքում ստացած համախառն դրամական մուտքերի և վճարումների հիման վրա դրամական հոսքերի մասին հաշվետվությունը կազմելիս առաջնորդվելու է ուղղակի մեթոդով:

**3.2 Թանկարժեք մետաղներ, քարեր և ոսկերչական իրեր**

3.2.1 Թանկարժեք մետաղներով /ոսկու ստանդարտացված և ոչ ստանդարտացված ձուլակտորներ և կամ դրանցով ներդրված ոսկով ավանդներ, ինչպես նաև ոսկերչական իրեր/ իրականացված գործառնությունների գծով հաշվապահական ձևակերպումները տրվում են դրանց ձեռք բերման կամ ներդրման արժեքով՝ վերափոխված ունցիայի:

3.2.2 Ոսկու ձեռք բերման գնի նկատմամբ շուկայական արժեքների փոփոխության ղեկավարում ճշգրտումները կատարվում են պարբերաբար՝ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ, ամսվա վերջին աշխատանքային օրը՝ Բանկի վարչության կողմից հաստատված ընթացակարգի, որոշման կամ Բանկի գլխավոր տնօրենի հրամանի պահանջներին համապատասխան:

3.2.3 Թանկարժեք քարերի առքը ձևակերպվում է ձեռք բերման գներով՝ վերափոխված կարատի Բանկի կողմից սահմանված համաձայն բանկի ներքին իրավական ակտերի:


**3.3 Ներդրումներ արժեթղթերում**

3.3.1 Բանկը առևտրական նպատակներով պահվող, վաճառքի համար մատչելի և մինչև մարման ժամկետը պահվող պարտքային արժեթղթերով և բաժնետոմսերով գործառնություններ կատարելիս, ինչպես նաև արժեթղթերը դասակարգելիս, առաջնորդվում է ՀՀ կենտրոնական բանկի որոշումներով, կարգերով, հրամաններով և մեթոդական ցուցումներով:

**3.4 Առևտրական նպատակներով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի շուկայական արժեքների վերագնահատման կամ դրանց փաստացի վաճառքի ղեկավարում ինքնարժեքի որոշումը**

3.4.1. Բանկի կողմից առևտրական նպատակով ձեռք բերված արժեթղթերը/ պարտքային արժեթղթեր, բաժնետոմսեր և այլ արժեթղթեր /բացառությամբ ՀՀ պետական պարտատոմսերի/, որոնք պահվում են առևտրական նպատակով՝ գների կարճաժամկետ տատանման արդյունքում եկամուտ ստանալու համար, շուկայական արժեքի փոփոխության ղեկավարում վերագնահատվում են հետևյալ ձևով,

ա/ բանկի հաշվեկշռում առկա առևտրական նպատակով ձեռք բերված արժեթղթերը պարբերաբար՝ ամիսը մեկ անգամ, ինչպես նաև յուրաքանչյուր վաճառքի ղեկավարում վերագնահատվում են հաշվի առնելով նրանց

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	Ամսաթիվ 11.01.2007	Խմբագրություն 1	4/ 20

շուկայական արժեքի փոփոխությունները, որի արդյունքները արտացոլվում են հաշվեկշռում՝ համապատասխանաբար յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը կամ արժեթղթի վաճառքի օրը,

բ/ կախված արժեթղթերի թողարկման վայրից, արժեթղթերի շուկայական արժեքների վերագնահատման համար հիմք են ծառայում թողարկման վայրի ֆոնդային շուկայի տվյալները, ստացված կապի կամ ինտերնետային կապի միջոցներով

գ/ Բանկի դիվիզային կենտրոնը վերը նշված կարգով և ժամկետում թողարկման վայրի /երկրի/ ֆոնդային շուկայից կապի կամ ինտերնետի միջոցներով ստացված արժեթղթերի շուկայական արժեքների վերագնահատման տվյալների հիման վրա պատրաստում է գեկուցագիր /տվյալների կցումով/ ուղղված Բանկի գլխավոր տնօրենին

դ/ գեկուցագրի վրա Բանկի գլխավոր տնօրենի համապատասխան մակագրության հիման վրա օժանդակող գրասենյակը կատարում է համապատասխան ձևակերպումներ:

ե/ վաճառքի համար մատչելի արժեթղթերը այն արժեթղթերն են, որոնք բանկը մտադիր չէ վաճառել մոտակա /կարճատև/ ժամանակահատվածում, սակայն դրանք կարող են վաճառվել և սովորաբար չեն պահվում մինչև մարման ժամկետի ավարտը կամ պահվում են մեկ տարուց պակաս ժամկետով և շուկայական արժեքի փոփոխության դեպքում վերագնահատումը կատարվում է սույն կետի ա-դ ենթակետերի համաձայն և վերագնահատման արդյունքները արտացոլվում են «Կապիտալի» բաժնի «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում:

3.4.2. Բանկի կողմից առևտրական նպատակով ձեռք բերված ՀՀ պետական պարտատուների իրական արժեքի ճշգրտումները՝ վերագնահատումները կատարվում են յուրաքանչյուր օր հետևյալ ձևով.

ա/ իրականացվում է տոկոսների հաշվեգրումներ, կիրառելով էֆեկտիվ տոկոսադրույքի մեթոդը

բ/ կատարվում է ՀՀ ԿԲ կողմից տրված մինչև մարում եկամտաբերության կորի տոկոսադրույքների հիման վրա արժեթղթի գնի ճշտումներ


3.4.3. Վաճառքի համար մատչելի արժեթղթերը այն արժեթղթերն են, որոնք բանկը մտադիր չէ վաճառել մոտակա /կարճատև/ ժամանակահատվածում, սակայն դրանք կարող են վաճառվել և սովորաբար չեն պահվում մինչև մարման ժամկետի ավարտը կամ պահվում են մեկ տարուց պակաս ժամկետով և շուկայական արժեքի փոփոխության դեպքում վերագնահատումը կատարվում է 3.4.2. 3.4.3. կետերում նշված կարգով և վերագնահատման արդյունքները արտացոլվում են «Կապիտալի» բաժնի «Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից առաջացած չիրացված շահույթ/վնաս» հաշվում:

3.4.4. Բանկի արժեթղթերի պորտֆելում առկա կորպորատիվ արժեթղթերի շուկայական արժեքների վերագնահատման կամ դրանց փաստացի վաճառքի դեպքում Բանկը ֆինանսական տարվա հաշվապահական հաշվառման համար ընտրում է ինքնարժեքի որոշման «միջին կշռված արժեքի» բանաձևը , որը որոշվում է հետևյալ ձևով՝ յուրաքանչյուր արժեթղթի միավորի արժեքը որոշվում է հաշվետու ժամանակաշրջանի սկզբի դրությամբ, նույնատիպ արժեթղթերի մնացորդների միավորների արժեքների և հաշվետու /ամսվա/ ժամանակաշրջանի ընթացքում գնված նույնատիպ արժեթղթերի միավորների արժեքների հանրագումարը բաժանած համապատասխան արժեթղթերի թվաքանակի վրա:

3.4.5. Մինչև մարման ժամկետի ավարտը պահվող արժեթղթերը և անժամկետ արժեթղթերը այն արժեթղթերն են, որոնք բանկը մտադիր է պահել մինչև մարման ժամկետի ավարտը կամ պահվում են երկարատև ժամանակահատվածում լրացուցիչ շահույթ ստանալու, արժեթուղթ թողարկողի վրա ներազդելու և/կամ նրան վերահսկելու նպատակով: Այսպիսի արժեթղթերի գծով ձևավորվում է հնարավոր կորուստների պահուստ համաձայն «ՀՀ տարածքում գործող բանկերի ինվեստիցիոն արժեթղթերում ներդրումների հնարավոր կորուստների պահուստի ձևավորման և օգտագործման» կարգի:

**3.5 Հաճախորդներին տրված վարկեր , դեբիտորական պարտքեր և ակտիվների արժեզրկում**

3.5.1 Հաճախորդների տարբեր խմբերին վարկերի տրամադրումը, վարկերի և տոկոսների մարման գործընթացը, ինչպես նաև ակտիվների արժեզրկման / այդ թվում՝ նաև ներելը կամ զիջելը/ գործառնությունները կատարվում են համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և այլ իրավական ակտերի, ինչպես նաև համաձայն Բանկի վարչության կողմից հաստատված ընթացակարգերի, հրահանգների, վարչության որոշումների և գլխավոր տնօրենի հրամանների դրույթների:

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>5/20</i>

3.5.2 Բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների կողմից վարկերի և դեբիտորական պարտքերի /ակտիվների/ դասակարգումը, հնարավոր կորուստների համար ընդհանուր և հատուկ պահուստավորումը, անհուսալի ճանաչված ակտիվների դուրս գրումը կատարվում են ՀՀ Կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից համատեղ հաստատված «ՀՀ տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման մասին» համանուն կարգի հիման վրա ընդունված Բանկի ներքին ակտի պահանջներին համապատասխան, պարբերականությամբ և ժամկետներում, իսկ պահուստի չափման ժամանակ օգտագործվում են սույն քաղաքականության 3.9.1. կետում նշված մոտեցումները:

3.5.3 Վարկերի/այդ թվում նաև օվերդրաֆտ, ֆակտորինգ և այլն/ և դեբիտորական պարտքերի գծով պայմանագրերի սպասարկման ընթացքում առաջացող տույժերը ենթակա են հաշվեկշռում պարտադիր հաշվառման:

3.5.4. Հաշվեկշռից ակտիվների դուրս գրելուց հետո ետհաշվեկշռում շարունակվում է տոկոսների և /կամ/տուժանքների հաշվեգրումը բացառապես վարկային կոմիտեի որոշման առկայության դեպքում:

3.5.5. Սահմանել, որ հաշվեկշռից ակտիվների դուրս գրելուց հետո ետհաշվեկշռում դրանք ենթակա են հաշվառման մինչև 3 տարի ժամանակով: Նշված ժամանակաշրջանի ընթացքում չմարված ակտիվները ենթակա են ետհաշվեկշռից դուրս գրման:

3.5.6 Սույն քաղաքականության 3.5.5. կետում նշված կարգով ետհաշվեկշռից դուրս գրված ակտիվները ենթակա են հաշվառման տվյալ նպատակի համար բացված բանկի ներքին ետհաշվեկշռային հաշիվներում:

**3.6 Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ**

3.6.1. Հիմնական միջոցները նյութական ակտիվներ են, որոնք՝ որպես կատարված գործառնությունների /դեպքերի/ արդյունք՝ ա/ առկա են բանկում

- արտադրանքի արտադրության,
- աշխատանքների կատարման,
- ծառայությունների մատուցման,
- վարձակալության տալու,
- վարչական,

նպատակներով օգտագործելու համար, բ/ օգտագործման ընթացքում պահպանում են իրենց բնահրային տեսքը, գ/ նախատեսվում են օգտագործել ավելի քան մեկ տարի ժամկետով՝ անկախ արժեքից:


3.6.2. Ակտիվը՝ որպես կատարված գործառնությունների/դեպքերի/ արդյունք, սեփականության իրավունքով պատկանում է կազմակերպությանը, եթե կազմակերպությունն ունի ակտիվը իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու օրենքով և այլ իրավական ակտերով ճանաչված պահպանվող իրավունք:

- տիրապետման իրավունքն ակտիվի փաստացի տիրապետելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է,
- օգտագործման իրավունքը ակտիվից տնտեսական օգուտներ ստանալու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է,
- տնօրինման իրավունքը ակտիվի ճակատագիրը որոշելու իրավաբանորեն ապահովված հնարավորությունն է,

3.6.3. Բանկի հիմնական միջոցները որպես գրասենյակային սարքավորում կամ կապի ու հաղորդակցության միջոցներ, հաշվողական, համակարգչային, ավտոմատ կառավարման այլ տեխնիկա, այլ հիմնական միջոցներ հաշվառման նպատակով դասակարգելիս պետք է առաջնորդվել՝ ելնելով դրանց օգտագործման նշանակությունից և նպատակներից:

3.6.4. Ոչ նյութական ակտիվը դա ֆիզիկական սուբստանցիայից գուրկ որոշելի /իդենտիֆիկացվող/ ոչ դրամային ակտիվ է, որը պահվում է արտադրությունում օգտագործելու կամ ծառայություններ մատուցելու, այլ անձանց վարձակալության տալու կամ վարչական նպատակներով օգտագործելու համար:

Ակտիվ՝ միջոց՝

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>6/20</i>

ա/որը վերահսկվում է բանկի կողմից՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և  
բ/ որից ապագա տնտեսական օգուտները ակնկալվում է, որ կհոսեն դեպի կազմակերպություն:

3.6.5. Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան դա ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարի պարբերական բաշխումն է նրա օգտակար ծառայության ընթացքում:

3.6.6. Օգտակար ծառայությանը դա

ա/ այն ժամանակահատվածն է, որի ընթացքում բանկն ակնկալում է օգտագործել ոչ նյութական ակտիվը, կամ  
բ/ աշխատանքների, ծառայությունների այն ծավալն է, որն ակնկալվում է ստանալ /կատարել, մատուցել/ակտիվի օգտագործման միջոցով:

3.6.7. Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի ժամանակաշրջանը և ամորտիզացիայի մեթոդը պետք է յուրաքանչյուր տարվա վերջում վերանայվի համապատասխան ստանդարտով սահմանված կարգով և պայմաններով:

3.6.8. Ձեռք բերված հիմնական միջոցների /անկախ արժեքից/ և ոչ նյութական ակտիվների միավորի հաշվառման նպատակով՝ արժեքի չափումը, ճանաչումը, հետագա ծախսումները, վերագնահատումները և դուրս գրումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ, հաշվապահական հաշվառման ստանդարտներով սահմանված կարգով, ինչպես նաև Բանկի կողմից ընդունված ընթացակարգերով, հրահանգներով, որոշումներով, հրամաններով և այլ ակտերով:

3.6.9. Հիմնական միջոցների միավորը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

ա/. ակնկալվում է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն կազմակերպություն, և՛  
բ/. դրա արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

3.6.10. Հիմնական միջոցների սկզբնական ճանաչմանը հաջորդող չափումների ժամանակ կիրառվում են երկու մոտեցում՝ հիմնական մոտեցում և թույլատրելի այլընտրանքային մոտեցում:

3.6.10.1. Հիմնական մոտեցման դեպքում հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո պետք է հաշվառվի իր սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Այսինքն, հիմնական մոտեցման համաձայն, հիմնական միջոցները սկզբնական ճանաչումից հետո հաշվառվում են այդ նույն արժեքով:

Այս մոտեցումը կիրառվում է այն հիմնական միջոցների նկատմամբ, որոնց իրական արժեքն օգտակար ծառայության ընթացքում էականորեն չի շեղվում հաշվեկշռային արժեքից: Սովորաբար այդպիսի հիմնական միջոցներն ունենում են փոքր օգտակար ծառայություն: Օրինակ համակարգչային տեխնիկան, գործիքները և այլն:


3.6.10.2. Թույլատրելի այլընտրանքային մոտեցման դեպքում հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ սկզբնական ճանաչումից հետո պետք է հաշվառվի վերագնահատված գումարով, որն իրենից ներկայացնում է նրա իրական արժեքն առանց համապատասխան կուտակված մաշվածության և արժեզրկումից կուտակված կորուստների: Վերագնահատումները պետք է կատարվեն բավարար պարբերականությամբ, այնպես, որ հաշվեկշռային արժեքը էականորեն չտարբերվի հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ իրական արժեքից:

Իրական արժեքն այն գումարն է, որով ակտիվը կարող է փոխանակվել իրագել և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ընթացքում:

Այս մոտեցումը կիրառվում է այն հիմնական միջոցների նկատմամբ, որոնց իրական արժեքն օգտակար ծառայության ընթացքում էականորեն շեղվում է հաշվեկշռային արժեքից: Սովորաբար այդպիսի հիմնական միջոցներն ունենում են մեծ օգտակար ծառայություն: Օրինակ շենքերը, կառուցվածքները և այլն:

3.6.11. Սահմանել, որ հիմնական միջոցների վերագնահատումը կատարվում է յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ: Հիմնական միջոցների որոշ դասերի իրական արժեքների էական և անկանոն փոփոխության դեպքում բանկի գլխավոր տնօրենի հրամանով տվյալ դասի գծով կարող է կատարվել վերագնահատում այլ պարբերականությամբ:

3.6.12. Ելնելով ՀՀ շուկայի ներկա անկայուն վիճակից, աշխարհագրական դիրքից/սեյսմիկ գոտում գտնվելու փաստը և այլն/, տեխնոլոգիական փոփոխությունների արագ տեմպերը /բարոյական մաշվածություն/, բանկի կողմից մատուցվող ծառայությունների հանդեպ շուկայի պահանջարկի փոփոխականությունը, Բանկը հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների /այդ թվում՝ ֆինանսական վարձակալված/գծով սահմանում է

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>7/20</i>

դրանց օգտակար ծառայության ներքոհիշյալ ժամկետները, հետևաբար և կատարում է մաշվող ակտիվի մաշվածության գումարի պարբերական բաշխում այդ ընթացքում՝

ա/ շենքի, շինությունների համար - 20 տարի

բ/ հաշվողական և համակարգչային տեխնիկայի համար – 1 տարի,

գ/ այլ հիմնական միջոցների համար – 5 տարի:

Մինչև 50 հազար դրամ արժողությամբ հիմնական միջոցների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է մեկ տարի:

Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն ժամկետը որոշում է Բանկը՝ ելնելով դրանց հնարավոր օգտագործման ժամկետներից: Վերջիններիս որոշման անհնարինության դեպքում ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն նվազագույն ժամկետը սահմանվում է տասը տարի:

Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածքը հաշվարկվում է դրանց օգտակար ծառայության ընթացքում գծային մեթոդով:

3.6.13. Սահմանել, որ վերագնահատման արդյունքում առաջացած աճը հաշվեգրվում է չբաշխված շահույթին բանկի կողմից ակտիվն օգտագործելու ընթացքում՝ մաշվածության հաշվարկմանը զուգընթաց: Այս դեպքում հաշվեգրվող գումարի մեծությունը որոշվում է ակտիվի վերագնահատված հաշվեկշռային արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության և ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա հաշվարկված մաշվածության միջև եղած տարբերությամբ:

Վերագնահատման արդյունքում առաջացած աճի հաշվեգրումը չբաշխված շահույթին ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում չի արտացոլվում:

3.6.14. Որոշելու համար՝ ոչ ընթացիկ ակտիվը արժեգրվել է, թե ոչ անհրաժեշտ է կիրառել ՀՀՀՀՍ 36 «Ակտիվների արժեգրվում» ստանդարտի պահանջները: Եթե ոչ ընթացիկ ակտիվը հաշվառվում է փոխհատուցվող գումարից ավելի մեծ գումարով, այսինքն նրա հաշվեկշռային արժեքը գերազանցում է այն գումարը, որն ակնկալվում է փոխհատուցել ակտիվի օգտագործման կամ վաճառքի միջոցով, ապա ակտիվը բնորոշվում է որպես արժեգրված, և անհրաժեշտ է ճանաչել արժեգրվումից կորուստ:


Փոխհատուցվող գումարն ակտիվի վաճառքի գուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է:

3.6.15. Ոչ ընթացիկ ակտիվների արժեգրվման դեպքում՝ հաշվեկշռային արժեքի և փոխհատուցվող գումարի տարբերության չափով բանկը ճանաչում է որպես ծախս, բացառությամբ այն դեպքերի, երբ ոչ ընթացիկ ակտիվները հաշվառվում են վերագնահատված արժեքով: Բանկը յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմված հաշվեկշռում գնահատում է նախորդ ժամանակաշրջաններում ճանաչված արժեգրվումներից կորուստները: Եթե ոչ ընթացիկ ակտիվների հաշվեկշռային արժեքի և փոխհատուցվող գումարի տարբերությունը նվազել է, այսինքն՝ արժեգրվումից կորուստները նվազել են, հետևաբար բանկը նախկին արժեգրվումից կորստի և վերջին արժեգրվումից կորստի գումարների տարբերության չափով ճանաչում է եկամուտ:

3.6.16. Բանկի կողմից ձեռք բերված նյութական և ոչ նյութական ակտիվների սկզբնական արժեքը ընդգրկում է նրանց գնման գինը, ներկրման տուրքերը, չփոխհատուցվող հարկերը / այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ, գույքահարկ, հողի հարկ/ և պարտադիր այլ վճարները և ակտիվը իր նպատակային օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած ծախսում:

3.6.17. Հիմնական միջոցների միավորը պետք է հանվի հաշվապահական հաշվեկշռից, երբ այն իրացվում/օտարվում/ կամ ընդմիջտ դուրս է հանվում օգտագործումից/լուծարվում է/, և ապագա ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում նրա իրացումից: Հիմնական միջոցների միավորի դուրս գրումից կամ իրացումից առաջացած արդյունքը պետք է որոշվի որպես ակտիվի իրացումից գուտ մուտքերի/հասույթի/ և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում պետք է ճանաչվի որպես եկամուտ կամ ծախս:

3.6.18. Բանկը կարող է իրացնել գործունեության համար ոչ անհրաժեշտ, հետագա օգտագործման համար ոչ պիտանի, տնտեսապես անարդյունավետ հիմնական միջոցներ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով : Հիմնական միջոցների օտարումը, լուծարումը և դուրսգրումը չպետք է խաթարի Բանկի տնտեսական ընթացիկ գործունեության նորմալ ընթացքը:

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>8/20</i>

3.6.19. Հիմնական միջոցների օտարման, լուծարման և դուրս գրման անհրաժեշտությունը հիմնավորելու, պահանջվող փաստաթղթերը ձևակերպելու և սահմանված կարգով ընթացք տալու համար Բանկի Գլխավոր տնօրենի հրամանով ստեղծվում է մշտական գործող հանձնաժողով /հետագայում Հանձնաժողով/:

3.6.20. Եթե հիմնական միջոցների, որպես մեկ ամբողջական միավորի /օտարման գինը/ իրական կամ շուկայական արժեքը, որը որոշվում է հիմնական միջոցների գնահատման արտոնագիր ունեցող անկախ գնահատողի կողմից, գերազանցում է ընկերության ընդհանուր ակտիվների հաշվեկշռային արժեքի 25% -ը, ապա հիմնական միջոցների ամբողջական կամ առանձին տարրերի վաճառքի թույլատվություն տրվում է Բանկի Խորհրդի կողմից:

3.6.21. Եթե իրացման ենթակա հիմնական միջոցների գինը /անկախ գնահատողի կողմից գնահատված իրական կամ շուկայական արժեքը/ պակաս է ընկերության ակտիվների արժեքի 25%-ից, ապա հիմնական միջոցների ամբողջական կամ առանձին տարրերի վաճառքը կատարվում է Բանկի Գլխավոր տնօրենի հրամանով, առանց Խորհրդի հետ համաձայնության:

3.6.22. Հիմնական միջոցների վաճառքն իրականացվում է՝

- մինչև 0.5 մլն. դրամ գնահատված արժեքով՝ պայմանագրային հիմունքներով,
- 0.5-3 մլն. դրամ գնահատված արժեքով՝ գնանշումով,
- 3 մլն. դրամից ավելի գնահատված արժեքով՝ աճուրդային եղանակով: Աճուրդային եղանակով /կրկնակի աճուրդից հետո/ չվաճառված հիմնական միջոցների վաճառքը իրականացվում է պայմանագրային եղանակով, վերջին աճուրդում ձևավորված գնով, կատարելով ուղղակի վաճառք:

3.6.23. Լուծարման նպատակով դուրս գրման ենթակա հիմնական միջոցները դրանք ոչ պիտանի ակտիվներն են, որոնք՝

- հետագա շահագործման համար ոչ պիտանի են դարձել լրիվ ֆիզիկական մաշվածության, վթարների, տարերային աղետների, շահագործման նորմալ պայմանների խախտման հետևանքով և այլ նմանատիպ պատճառներով,
- հետագա օգտագործումը տնտեսապես աննպատակահարմար է, իրացումը անհնար է:
- Հիմնական միջոցների լրիվ կամ մասնակի լուծարման դեպքում կազմվում է հիմնական միջոցների դուրս գրման ակտ, որը հաստատվում է Բանկի գլխավոր տնօրենի կողմից և որը հիմք է հանդիսանում դուրս գրման արդյունքում առաջացած պահեստամասերի, բյուրեղի, ջարդոնի և այլ պիտանի մասերի պահեստ մուտքագրման համար:

3.6.24. Սահմանել, որ Բանկը որպես հիմնական միջոցների և տեղակայման ենթակա սարքավորումների սկզբնական հաշվառման փաստաթղթերի և գրանցամատյանների ձևեր կիրառում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված օրինակելի ձևերը:

3.6.25. Մինչև յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտը կազմակերպությունները պարտավոր են կատարել հիմնական միջոցների գույքագրում: Գույքագրումն իրականացվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված կարգով:

Հիմնական միջոցների գույքագրման ընթացքում հայտնաբերված ավելցուկը և պակասորդը արձանագրվում է գույքագրման ակտով, իսկ այդ ակտի հիման վրա հաշվապահական ձևակերպումները տրվում են միայն գույքագրման ակտը Գլխավոր տնօրենի կողմից հաստատված լինելու դեպքում:

### 3.7 Պաշարներ

3.7.1. Պաշարներ՝ այն ակտիվներն են, որոնք.


ա/ պահվում են սովորական/ամենօրյա/ գործունեության ընթացքում վաճառքի համար,

բ/ արտադրության ընթացքում են՝ այդպիսի վաճառքի համար,

գ/ արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով՝ արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար:

3.7.2 Իրացման գուտ արժեք՝ սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է, հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

3.7.3. Պաշարները ընդգրկում են՝

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>9/20</i>

- ապրանքները, ներառյալ բանկի կողմից գնված, գրավի տնօրինման արդյունքում որպես բանկին ի սեփականություն անցած և վերավաճառքի համար պահվող այլ ունեցվածքը,
- նյութերը և օժանդակ միջոցները, որոնք պետք է օգտագործվեն արտադրության ընթացքում,
- արագամաշ առարկաները:

3.7.4. Պաշարները պետք է չափվեն ինքնարժեքից և իրացման արժեքից նվազագույնով:

3.7.5. Ձեռք բերված նյութերի, օժանդակ միջոցների, արագամաշ առարկաների և տնտեսական ապրանքների հաշվառման նպատակով՝ արժեքի չափումը, ճանաչումը, հետագա ծախսումները, վերագնահատումները և դուրս գրումները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև Բանկի կողմից ընդունված կարգերով, որոշումներով, հրամաններով և ակտերով:

3.7.6. Պաշարների ձեռք բերման միավորի սկզբնական արժեքն /ծախսումները/ ընդգրկում է նրա գնման գինը, չփոխհատուցվող հարկերը /այդ թվում՝ ավելացված արժեքի հարկ, գույքահարկ, հողի հարկ/ և պարտադիր այլ վճարները, կոմիսիոն վճարները, ինչպես նաև տրանսպորտային, բեռնման, բեռնաթափման և այլ ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են ապրանքների, նյութերի և ծառայությունների ձեռք բերման հետ:

3.7.7. Արագամաշ առարկաների արժեքը դուրս է գրվում ծախսումների համապատասխան հաշիվներից շահագործման հանձնելու կամ բաց թողնելու պահին՝ 100 տոկոսով անկախ արժեքից:

3.7.8. Պաշարների ինքնարժեքի որոշման ժամանակ Բանկը ընդունում և կիրառում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» ԱՄԱԵ /ՖԻՖՈ/ բանաձևը:

3.7.9. ԱՄԱԵ /ՖԻՖՈ/ բանաձևը ենթադրում է, որ պաշարների միավորները, որոնք գնվել են առաջինը, ելքագրվում են առաջինը և, հետևաբար միավորները, որոնք մնում են պաշարներում հաշվետու ժամանակաշրջանի վերջում, վերջին գնվածներն են:

3.7.10. Բանկը պաշարների հաշվառումը իրականացնում է համակարգչային ծրագրերի միջոցով:

### 3.8 Արտարժույթի փոխանակման փոխարժեքի փոփոխությունների հետևանքները

3.8.1. Բանկը արտարժույթային բոլոր տեսակի գործառնությունների կատարման ժամանակ, այդ թվում արտարժույթի վերագնահատումները իրականացնելիս, առաջնորդվում է իրավական ակտերի դրույթներով, ինչպես նաև Բանկի վարչության կողմից հաստատված ընթացակարգերով, հրահանգներով վարչության որոշումներով և հրամաններով:

3.8.2. Բանկը, որպես փոխանակման փոխարժեք՝ արտարժույթով գործարքների կատարման ժամանակ հիմք է ընդունում ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված հաշվարկային փոխարժեքը:

### 3.9 Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ

3.9.1. Պահուստների, պայմանական պարտավորությունների և պայմանական ակտիվների ճանաչման չափանիշները, չափման հիմունքները, միմյանցից տարբերակման սկզբունքները հետևյալն են.

➤ Պահուստ՝ անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն:

. Բանկը պահուստը ճանաչում է, երբ՝

- ունի ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք,
- պարտականության մարման նպատակով հավանական է տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք,
- պարտականությունը արժանահավատորեն հնարավոր է գնահատել:

Եթե նշված պայմանները չեն բավարարվում, ապա բանկը պահուստ չի ձևավորում:


Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվեկշռի ամսաթվի

դրությամբ ներկա պարտականությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը:

Պահուստի չափման ժամանակ օգտագործվում են հետևյալ մոտեցումները.

ա/ պահուստի լավագույն գնահատականը որոշելու համար պետք է հաշվի առնվեն այն ռիսկերը և անորոշությունները, որոնք անխուսափելիորեն ի հայտ են գալիս բազմաթիվ դեպքերում և պարագաներում,

բ/ եթե ժամանակի մեջ դրամի արժեքի փոփոխության ազդեցությունը էական է, ապա պահուստի գումարը պետք է իրենից ներկայացնի այն ծախսումների ներկա /գեղջված/ արժեքը, որոնք ակնկալվում է, որ կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար,

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	10/20

գ/ ապագա դեպքերը, որոնք կարող են ազդեցություն թողնել պարտավորությունը մարելու համար պահանջվող գումարի վրա, պետք է արտացոլված լինեն պահուստում, եթե բավականաչափ անկողմնակալ վկայություն կա, որ դրանք ի հայտ են գալիս:

դ/ ակտիվների ակնկալվող օտարումից շահույթները չպետք է հաշվի առնվեն պահուստը չափելիս:

Պահուստը մարելու համար անհրաժեշտ ծախսումները ամբողջությամբ կամ մասամբ կարող են փոխհատուցվել այլ անձանց կողմից /օրինակ՝ ապահովագրական պայմանագրերի, փոխհատուցման վերաբերյալ համաձայնությունների կամ մատակարարի երաշխիքների միջոցով/: Նման փոխհատուցումները հաշվառվում են հետևյալ կերպ.

ա/ փոխհատուցումը պետք է ճանաչվի այն դեպքում, երբ ըստ էության որոշակի է, որ կազմակերպության կողմից պարտականությունը մարելու դեպքում փոխհատուցումը կստացվի,

բ/ փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ,

գ/ փոխհատուցման գծով ճանաչված գումարը չպետք է գերազանցի պահուստի գումարը:

Պահուստին վերաբերվող ծախսը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում կարող է ներկայացվել զուտ հիմունքով՝ հանելով փոխհատուցման գծով ճանաչված գումարը:

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ պահուստները պետք է վերանայվեն և ճշգրտվեն՝ արտացոլելու համար ընթացիկ լավագույն գնահատականը: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը պետք է հակադարձվի:

Եթե ճանաչվել է ներկա /գեղչված/ արժեքով, ապա պահուստի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ավելացվում է՝ արտացոլելու համար ժամանակի անցնելու փաստը: Այդ ավելացումը ճանաչվում է որպես տոկոսային ծախս:

Պահուստը պետք է օգտագործվի միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:


- Պարտավորություն՝ բանկի ներկա պարտականությունը՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի մարումը/կատարումը/, ակնկալվում է, որ կհանգեցնի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքի:
- Պարտավորեցնող դեպք՝ դեպք, որը հանգեցնում է իրավական կամ կառուցողական պարտականության, որի մարումից/կատարումից/խուսափելու ոչ մի իրատեսական այլընտրանք բանկը չունի:
- Իրավական պարտականությունը բխում է պայմանագրից, օրենսդրությունից և օրենքներից:
- Կառուցողական պարտականությունը բխում է բանկի գործողություններից, որտեղ՝ անցյալի փորձով, հրապարակված քաղաքականությամբ կամ ընթացիկ հայտարարությամբ բանկը ցույց է տալիս, որ ստանձնելու է որոշակի պարտավորություններ և կատարելու է նշված պարտավորությունները:
- Պայմանական պարտավորություն՝

ա/. հնարավոր պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չունենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում կազմակերպության կողմից, կամ

բ/. ներկա պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որը սակայն չի ճանաչվում հետևյալ պատճառներով.

- հավանական չէ, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, կամ
- պարտականության գումարը չի կարող չափվել բավարար արժանահավատությամբ:

Պայմանական պարտավորությունները պետք է ճանաչվեն արտահաշվեկշռում, այլ ոչ թե հաշվեկշռում: Արտահաշվեկշռում հաշվառված պայմանական պարտավորությունները շարունակաբար պետք է գնահատվեն որոշելու համար՝ արդյոք տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսքը դարձել է հավանական, թե՛ ոչ: Եթե հավանական է դառնում, որ նախկինում որպես պայմանական պարտավորություն դիտվող հոդվածի գծով կպահանջվի ապագա տնտեսական օգուտների արտահոսք, ապա պահուստ ճանաչվում է այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ տեղի է ունեցել հավանականության փոփոխություն:

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	<i>11/20</i>

➤ Պայմանական ակտիվ՝ հնարավոր ակտիվ՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, որի գոյությունը հաստատվելու է միայն մեկ կամ ավելի ապագա անորոշ դեպքերի տեղի ունենալով կամ չուներենալով, որոնք ամբողջովին չեն վերահսկվում բանկի կողմից:

Պայմանական ակտիվները պետք է ճանաչվեն արտահաշվեկշռում, այլ ոչ թե հաշվեկշռում:

Պայմանական ակտիվները սովորաբար առաջանում են չալանավորված կամ այլ չնախատեսված դեպքերից, որոնք առաջացնում են դեպի բանկ տնտեսական օգուտների ներհոսքի հնարավորություն:

Արտահաշվեկշռում հաշվառված պայմանական ակտիվները շարունակաբար պետք է գնահատվեն որոշելու համար, որ դրանց հետ կապված հանգամանքների զարգացումները համարժեքորեն արտացոլված լինեն ֆինանսական հաշվետվություններում: Այն դեպքերում երբ ըստ էության որոշակի է դարձել, որ տեղի կունենա տնտեսական օգուտների ներհոսք, ակտիվները և համապատասխան եկամուտները ճանաչվում է այն ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում, երբ տեղի է ունեցել հավանականության փոփոխություն:

3.9.2. Բանկը անձնակազմի գծով ստանձնած աշխատանքի վարձատրությանն ուղղված միջոցների և դրանց հավասարեցված եկամուտների, հարկային վճարների, մատակարարների հետ կնքված ծառայությունների մատուցման, ցպահանջ, ժամկետային ավանդների և վարկային պայմանագրերի վճարների գծով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում և պարբերականությամբ /ելնելով գործառնության բնույթից՝ օրական կամ յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ/ հաշվեգրման սկզբունքով ձևավորել պարտավորություններ:

3.9.3. Պահուստները կարող են տարբերակվել այլ պարտավորություններից, ինչպիսիք են առևտրային կրեդիտորական պարտքերը և այլ հաշվեգրված պարտավորությունները, քանի որ պահուստների դեպքում առկա է մարման համար պահանջվող ապագա ծախսումների ժամկետների և գումարների անորոշություն:

3.9.4. Յուրաքանչյուր շաբաթվա և ամսվա վերջին աշխատանքային օրերի դրությամբ դրանց հաջորդող աշխատանքային օրը պարբերաբար կատարվում է բանկի կողմից կատարված դեբիտորական պարտքեր՝ կանխավճարներ բյուջեի և կրեդիտորական պարտքեր՝ բյուջեի գծով թիվ 193 և թիվ 382 հաշվեկշռային հաշիվների միջև ըստ արժույթների մնացորդների/ առկայության դեպքում/ հաշվանցում :

3.9.5. Բանկի կողմից աշխատակիցների հանդեպ ստանձնած պարտքային պարտավորությունների հաշվառման համար Բանկը ըստ հոդվածների ստեղծում է առանձին-առանձին պահուստներ :

3.9.6. Աշխատողների արձակուրդների գալիք վճարման գծով պարտավորությունը ձևավորվում է ամենամսյա հատկացումներ կատարելու միջոցով՝ ներառելով շրջանառության ծախսերի մեջ:

3.9.7. Տարեվերջին՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ, կատարվում է աշխատողների արձակուրդների գալիք վճարման պահուստի հաջորդ տարի տեղափոխվող մնացորդի վերահաշվարկ:


3.9.8. Հաշվարկված պահուստի մնացորդի և առկա մնացորդի տարբերության գումարի չափով պակասեցվում կամ ավելացվում է արձակուրդների գալիք վճարման պահուստի առկա մնացորդը՝ թղթակցելով շրջանառության ծախսերի հաշվառման հաշվապահական հաշիվների հետ:

3.9.9. Պահուստների, պայմանական ակտիվների և պայմանական պարտավորությունների ճանաչման, չափման, գնահատման, օգտագործման, ռիսկերի և անորոշությունների վերաբերյալ մնացած դրույթները կարգավորվում են ՀՀ հաշվապահական հաշվառման համապատասխան ստանդարտով և այլ իրավական ակտերով:

### 3.10. Հասույթ

3.10.1. Բանկի կողմից գործարքների կատարման ընթացքում ստացված կամ ստացվելիք եկամուտները Բանկը չափում, ճանաչում և գրանցում է հաշվեգրման եղանակով, անկախ եկամտի փաստացի ստացման կամ վճարումների իրականացման ժամկետից, հատուցման իրական արժեքով, հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, գործարքի ավարտման աստիճանի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.10.2. ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում Բանկը որոշ դեպքերում եկամուտների ճանաչում և գրանցումը հաշվեկշռում իրականացնում է «դրամարկղային մեթոդով», այսինքն դրանց փաստացի ստացման պահին: Մասնավորապես «դրամարկղային մեթոդը» կիրառվում է չաշխատող ակտիվների գծով հաշվարկվելիք

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	Հաշվապահական հաշվառման քաղաքականություն	Անսաթիվ 11.01.2007	Խմբագրություն 1	12/20

տոկոսների, տույժերի, բոլոր տեսակի տուգանքների, պատճառած վնասների փոխհատուցումների ստացման և օրենսդրությամբ, իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

3.10.3. Բանկը հաշվեգրման եղանակով ծախսերի հաշվառումը իրականացնում է սույն քաղաքականության 3.9.2 կետում նկարագրված ձևով:

### 3.11 Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը

3.11.1. Ֆինանսական գործիք - ցանկացած պայմանագիր, որը միաժամանակ մի կազմակերպության մոտ առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մյուս կազմակերպության մոտ՝ ֆինանսական պատասվորություն կամ սեփական կապիտալի գործիք:

3.11.2. Ֆինանսական ակտիվը ցանկացած ակտիվ է, որը՝

ա/ դրամական միջոց է,

բ/ մեկ այլ կազմակերպությունից դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ ստանալու պայմանագրային իրավունք է,

գ/ մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ նպաստավոր պայմաններով ֆինանսական գործիքներ փոխանակելու պայմանագրային իրավունք է, կամ՝

դ/այլ կազմակերպության սեփական կապիտալի գործիք է:

3.11.3. Հաշվապահական հաշվառման ստանդարտով սահմանված են ֆինանսական ակտիվների չորս կատեգորիաներ՝

ա/ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվները այն ֆինանսական ակտիվներն են, որոնք ձեռք են բերվել կամ առաջացել են հիմնականում գների կամ դիվերային հավելագների /մարժանների/ կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով: Ֆինանսական ակտիվը պետք է դասակարգվի որպես առևտրական նպատակներով պահվող, եթե այն, անկախ դրա ձեռքբերման պատճառից, այնպիսի պորտֆելի մի մասն է, որի համար առկա են կարճ ժամկետում շահույթ ստանալու որոշակի ուղիներ,

բ/ մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները այն ֆինանսական ակտիվներն են. որոնք՝

- ենթադրում են ֆիքսված կամ որոշելի վճարումներ,
- ունեն ֆիքսված մարման ժամկետ,
- բանկը հաստատապես մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, և
- բանկի կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր չեն,

գ/ բանկի կողմից տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքերը այն ֆինանսական ակտիվներն են, որոնք առաջանում են բանկի կողմից ուղղակիորեն պարտապանին /դեբիտորին/ դրամ, ապրանքներ կամ ծառայություններ տրամադրելու միջոցով

դ/ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները բոլոր մնացած ֆինանսական ակտիվներն են:

3.11.4. Ֆինանսական պարտավորությունը ցանկացած պարտավորություն է, որը պայմանագրային պարտականություն է՝


ա/ մեկ այլ կազմակերպությանը դրամական միջոցներ, այլ ֆինանսական ակտիվներ տրամադրելու/վճարելու/, կամ՝

բ/ մեկ այլ կազմակերպության հետ պոտենցիալ ոչ նպաստավոր պայմաններով ֆինանսական գործիքներ փոխանակելու:

3.11.5. Հաշվապահական հաշվառման ստանդարտով սահմանված են ֆինանսական պարտավորությունների երկու կատեգորիաներ՝

ա/ առևտրական նպատակներով պահվող ֆինանսական պարտավորությունները այն ֆինանսական պարտավորություններն են, որոնք ձեռք են բերվել կամ առաջացել են հիմնականում գների կամ դիվերային հավելագների /մարժանների/ կարճաժամկետ տատանումներից շահույթ ստանալու նպատակով,

բ/ այլ ֆինանսական պարտավորությունները բոլոր մնացած ֆինանսական պարտավորություններն են:

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	13/20

3.11.6. Սեփական կապիտալի գործիքը/ կոչվում է նաև բաժնեմասնակցության գործիք/ ցանկացած պայմանագիր է, որ հավաստում է բանկի՝ բոլոր պարտավորությունները հանելուց հետո մնացորդային ակտիվների բաժնի նկատմամբ իրավունք:

3.11.7. Իրական արժեք՝ այն գումարը, որով ակտիվը կարող է փոխանակվել կամ պարտավորությունը մարվել իրագրել և պատրաստական կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ընթացքում:

3.11.8. Աժանցյալ գործիքը՝ ֆինանսական գործիք է, որի արժեքը փոփոխվում է կապված տոկոսադրոյքի, գնի, փոխարժեքի ու վարկունակության փոփոխությունների, ինչպես նաև չի պահանջվում սկզբնական գուտ ներդրում կամ էլ պահանջվում է աննշան սկզբնական գուտ ներդրում և որի գծով վերջնահաշվարկը կատարվում է ապագա որևէ ամսաթվին:

3.11.9 Բանկը ֆինանսական գործիքների չափումը, ճանաչումը, օգտագործումը և հաշվառումը կատարում է ՀՀ օրենսդրությամբ, ՀՀ ստանդարտներով սահմանված կարգով, ինչպես նաև Բանկի կողմից ընդունված ընթացակարգերով, հրահանգներով, որոշումներով, հրամաններով և ակտերով:

3.11.10. Բանկը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իր հաշվեկշռում ճանաչում է այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ, այսինքն՝ հաշվեկշռում հաշվառումը կատարվում է այն օրվա դրությամբ, երբ բանկը պարտավորվում է գնել ակտիվը կամ մարել պարտավորությունը: Ֆինանսական գործիքների գնման և վաճառքի նման հաշվառումը կոչվում է ըստ առևտրի ամսաթվի հաշվառում:

3.11.11. Բանկի կողմից ֆինանսական ակտիվի կամ դրա մի մասի ապաճանաչման /հաշվեկշռից դուրս գրելու/ համար կիրառվում են հետևյալ սկզբունքները.

ա/ Ֆինանսական ակտիվը կամ դրա մի մասը պետք է դուրս գրվի այն և միայն այն դեպքում, երբ Բանկը կորցնում է վերահսկողությունը պայմանագրային իրավունքների նկատմամբ, որոնք կազմում են այդ ֆինանսական ակտիվը /կամ ֆինանսական ակտիվի մի մասը/: Բանկը կորցնում է այդ վերահսկողությունը, եթե այն իրացնում է պայմանագրով սահմանված օգուտների նկատմամբ իրավունքները, իրավունքների ուժի մեջ մտնելու ժամկետը լրանում է կամ հրաժարվում է այդ իրավունքներից,


բ/ որոշումը, թե արդյոք Բանկը կորցրել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, թե ոչ, կախված է ինչպես Բանկի, այնպես էլ ստացողի դիրքից: Հետևաբար, եթե կազմակերպություններից որևէ մեկի դիրքը ցույց է տալիս, որ փոխանցողը պահպանել է վերահսկողությունը, ապա փոխանցողը չպետք է դուրսգրի ակտիվն իր հաշվեկշռից: Փոխանցողը չի կորցնում վերահսկողությունը փոխանցված ֆինանսական ակտիվի նկատմամբ, և, հետևաբար, ակտիվը չի ապաճանաչվում, եթե, օրինակ.

1. փոխանցողն իրավունք ունի հետ գնել փոխանցված ակտիվը, բացի այն դեպքերից, երբ ակտիվը հեշտությամբ կարելի է ձեռք բերել շուկայում, և հետգնման գինն իրենից ներկայացնում է հետգնման պահի դրությամբ իրական արժեքը,
2. փոխանցողը և իրավունք ունի, և պարտավոր է հետ գնել փոխանցված ակտիվն այնպիսի պայմաններով, որոնք ստացողին՝ փոխանցված ակտիվի դիմաց ստացված ակտիվների գծով գործնականում ապահովում են փոխատուի հատույցին հավասար հատույց: Փոխատուի հատույցն այն հատույցն է, որն էականորեն չի տարբերվում այն մուտքերից, որոնք կարող էին ստացվել փոխանցողին տրամադրված փոխառությունից, որն ամբողջապես ապահովված է փոխանցված ակտիվով,

գ/ ապաճանաչման ժամանակ այլ կողմին փոխանցված ակտիվի / կամ ակտիվի մի մասի/ հաշվեկշռային արժեքի և հետևյալ երկու մեծությունների՝ 1. ստացված կամ ստացման ենթակա մուտքերի և 2. սեփական կապիտալում ճանաչված՝ ակտիվի իրական արժեքն արտացոլելու համար նախկինում կատարված ճշգրտումների հանրագումարի տարբերությունը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում որպես եկամուտ կամ ծախս,

դ/ եթե կազմակերպությունը փոխանցում է ֆինանսական ակտիվի մի մասը այլ կողմերին՝ պահպանելով դրա մյուս մասը, ապա ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը պետք է բաշխվի պահպանված և վաճառված ամիսների միջև՝ հիմք ընդունելով վաճառքի ամսաթվի դրությամբ դրանց հարաբերական իրական արժեքները: Շահույթը կամ վնասը պետք է ճանաչվեն՝ հիմք ընդունելով վաճառված մասի գծով մուտքերը,

ե/ եթե Բանկը փոխանցում է ամբողջ ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, սակայն դրանով հանդերձ ստեղծում է նոր ֆինանսական ակտիվ կամ ստանձնում է նոր ֆինանսական պարտավորություն,

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	14/20

ապա Բանկը պետք է ճանաչի այդ նոր ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը իրական արժեքով և պետք է ճանաչի գործարքով շահույթը կամ վնասը՝ հիմք ընդունելով հետևյալ երկու մեծությունների տարբերությունը.

1. մուտքերը և
2. վաճառված ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքին գումարած ստանձնած նոր ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը, հանած նոր ձեռքբերված ֆինանսական ակտիվների իրական արժեքը և գումարած կամ հանած այդ ակտիվի իրական արժեքն արտացոլելու համար նախկինում կատարված ճշգրտումները, որոնք ճանաչվել էին սեփական կապիտալում:

Բանկը պետք է ֆինանսական պարտավորությունը ամբողջությամբ կամ նրա մի մասը հաշվապահական հաշվեկշռից դուրս է գրի այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ պայմանագրով սահմանված պարտականությունը կատարվել է, չեղյալ է համարվել, կամ էլ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը: Աշխարհում է, եթե

ա/ պարտապանը պարտավորությունը կատարում է պարտատիրոջը վճարելու միջոցով՝ սովորաբար դրամական միջոցներով, այլ ֆինանսական ակտիվներով, ապրանքներով կամ ծառայություններով, կամ

բ/ պարտապանը դատական կարգով կամ պարտատիրոջ կողմից իրավաբանորեն ազատվել է պարտավորության /կամ դրա մի մասի/ գծով սկզբնական պատասխանատվություններից /այն փաստը, որ պարտապանը կարող է երաշխավորություն տրամադրած լինել, պարտադիր չէ, որ նշանակի, թե այս պայմանը բավարարված չէ/:

3.11.12. Բանկի կողմից ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի ապաճանաչման /հաշվեկշռից դուրս գրելու/ համար կիրառվում են հետևյալ սկզբունքները.

ա/ Բանկը պետք է հաշվեկշռից դուրս գրի ֆինանսական պարտավորությունը / կամ ֆինանսական պարտավորության մի մասը/ այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն՝ երբ պայմանագրով սահմանված պարտավորությունը կատարվել է, չեղյալ է համարվել կամ լրացել է դրա ուժի մեջ լինելու ժամկետը,

բ/ փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմանները էականորեն տարբերվում են միմյանցից, իրենից ներկայացնում են հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը: Նմանապես, գոյություն ունեցող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխությունը /անկախ նրանից, թե դա կատարվել է պարտապանի ֆինանսական դժվարությունների կամ այլ պատճառներով/ պետք է հաշվառվի որպես հին պարտքի մարում,

գ/ մարված կամ այլ կողմին փոխանցված պարտավորության / կամ պարտավորության մի մասի/ հաշվեկշռային արժեքի և դրա համար վճարված գումարի միջև տարբերությունը պետք է ճանաչվի ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:


3.11.13. Բանկը ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչման ժամանակ դրանք չափում է իրենց սկզբնական արժեքով, որն իրենից ներկայացնում է դրանց դիմաց տրված կամ ստացված փոխհատուցման իրական արժեքը:

Բանկը սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ իրենցից ակտիվ ներկայացնող ածանցյալ գործիքները, չափում է դրանց իրական արժեքով՝ առանց նվազեցնելու վաճառքի կամ այլ ձևով օտարման ժամանակ կատարված ծախսումները:

Բանկը սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական պարտավորությունները, բացառությամբ առևտրային նպատակներով պահվող պարտավորությունների և իրենցից պարտավորություն ներկայացնող ածանցյալ գործիքների, չափում է ամորտիզացված արժեքով,

այսինքն՝ այն գումարով, որով ֆինանսական պարտավորությունը չափվել էր սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած կամ հանած սկզբնական գումարի և մարման գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան և հանած արժեքը կամ անհավաքագրելիության գծով դուրս գրված ցանկացած գումար:

Բանկը առևտրային նպատակներով պահվող պարտավորությունները և իրենցից պարտավորություն ներկայացնող ածանցյալ գործիքները չափում է իրական արժեքով:

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	15/20

3.11.14. Հեջավորում նշանակում է հեջավորման մեկ կամ ավելի գործիքների նախատեսում՝ այնպես, որ դրանց իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունն ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցի հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ դրամական միջոցների հոսքերի փոփոխությունը:

Հեջավորված հոդվածը կարող է լինել ճանաչված ակտիվ կամ պարտավորություն, չճանաչված կայուն պարտավորվածություն կամ ակնկալվող ապագա գործարք, որի հետ կապված պարտավորվածություն բանկը չունի, սակայն այն մեծապես հավանական է:

Հեջավորման գործիք՝ նախատեսված ածանցյալ գործիք, մեկ այլ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն, որի իրական արժեքը կամ դրամական միջոցների հոսքերը ակնկալվում է, որ կփոխհատուցեն նախատեսված հեջավորված հոդվածի իրական արժեքի կամ ապագա դրամական միջոցների հոսքերի փոփոխությունները:

Հեջի հաշվապահական հաշվառման ժամանակ հեջավորման գործիքի և համապատասխան հեջավորվող հոդվածի իրական արժեքների փոփոխությունների արդյունքները ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում համաչափորեն ճանաչվում են զուտ շահույթ կամ վնաս:

3.11.15. Բանկի յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջին աշխատանքային օրը եկամուտների և ծախսերի ամփոփման ու փակման արդյունքում առաջացած տարեկան շահույթից ՀՀ օրենսդրությամբ սահմանված հարկերը և մյուս պարտադիր վճարումները հաշվարկելուց և ձևակերպելուց հետո, Բանկի ձևավորված զուտ շահույթից տարեկան շահաբաժինների վճարման, շահաբաժնի չափի և ձևի, ֆոնդերի համալրման մասին որոշումները ընդունում է բաժնետերերի ընդհանուր ժողովը, սահմանելով նաև վճարման ամսաթիվը:

3.11.16. Բանկի մասնաճյուղերի ֆինանսական տարվա արդյունքի ամփոփումից հետո գոյացած վնասի կամ շահույթի հետագա տնօրինման հարցերը կարգավորվում են հետևյալ կերպ .

ա/ Բանկի վարչությունը կայացրած որոշումով ընդունում է ի գիտություն մասնաճյուղի կողմից ներկայացված տարեկան հաշվետվությունը և պատրաստում նյութեր բանկի խորհրդին ներկայացնելու համար,  
բ/ Բանկի խորհուրդը ստանալով բանկի վարչության կայացրած որոշումը՝ կապված մասնաճյուղի շահույթի կամ վնասի մասին տարեկան հաշվետվության հետ, իր հերթին պատրաստում է առաջարկություն և սահմանված կարգով ներկայացնում Բանկի բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողովի հաստատմանը :

3.11.17. Վերը նշված 3.11.4 կետի ա/ և բ/ ենթակետերում թվարկված ձևով են կարգավորվում նաև Բանկի ներկայացուցչությունների տարեկան արդյունքները:

### 3.12. Կապակցված կողմեր

3.12.1 Կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: ՀՀՀՀՄ 24-ը առնչվում է հետևյալ կապակցված կողմերի հետ փոխհարաբերություններին՝

ա) կազմակերպություններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերահսկում են Բանկին կամ վերահսկվում նրա կողմից, կամ Բանկի հետ ընդհանուր վերահսկողության տակ են գտնվում (օրինակ՝ հողինգային կազմակերպությունները, դուստր ընկերությունները և միևնույն մայր կազմակերպության այլ դուստր ընկերությունները),


բ) ասոցիացված կազմակերպություններ,

գ) համատեղ վերահսկվող միավորներ,

դ) քաղաքացիներ (ներառյալ՝ դրանց ընտանիքի մտերիմ անդամները), որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն հաշվետու կազմակերպությունում ունեն այնքան ձայնի իրավունք, որը նրանց կազմակերպության վրա նշանակալի ազդեցության հնարավորություն է տալիս,

ե) հանգուցային կառավարչական անձնակազմ, այսինքն այն անձինք, որոնք իրավասու են և պատասխանատվություն են կրում հաշվետու կազմակերպության գործունեության պլանավորման, կառավարման և վերահսկողության իրականացման համար, ներառյալ կազմակերպությունների տնօրենները, պաշտոնատար անձինք և նրանց ընտանիքի մտերիմ անդամները,

զ) կազմակերպություններ, որոնցում զգալի քանակությամբ ձայների իրավունքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում է «դ» և «ե» կետերում նկարագրված ցանկացած անձի, կամ որոնց վրա այդպիսի

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	16/20

անձինք ունեն նշանակալի ազդեցություն: Դրանցից են այն կազմակերպությունները, որոնք պատկանում են հաշվետու կազմակերպության տնօրեններին կամ խոշոր բաժնետերերին, և այն կազմակերպությունները, որոնք հաշվետու կազմակերպության հետ ունեն հանգուցային կառավարչական անձնակազմի ընդհանուր անդամ:

3.12.2. ՀՀՀՀՄ 24-ի համատեքստում հետևյալ կողմերը չեն համարվում կապակցված

ա) երկու կազմակերպությունները, զուտ այն պատճառով, որ ունեն ընդհանուր տնօրեն (բայց անհրաժեշտ է հաշվի առնել հնարավորությունը և գնահատել հավանականությունը, որ տնօրենը կարող է ազդել երկու կազմակերպությունների քաղաքականությունների վրա՝ նրանց գործնական հարաբերություններում),

բ) ֆինանսական միջոցներ տրամադրողները, արհմիությունները, հասարակական նշանակության կազմակերպությունները, պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, և այն կազմակերպությունները, որոնք իրենց սովորական՝ գործնական հարաբերությունների ընթացքում հարաբերվում են վերը նշվածների հետ (չնայած վերջիններս կարող են սահմանափակել կազմակերպության գործելու ազատությունը կամ մասնակցել նրա որոշումներ ընդունելու գործընթացին), և

գ) առանձին գնորդը, մատակարարը, ֆրանշիզ տրամադրող ընկերությունը, բաշխիչը (դիստրիբյուտոր) կամ գլխավոր գործակալը, որոնց հետ կազմակերպությունը զգալի ծավալի գործարքներ է իրականացնում, և պարզապես միայն այդ պատճառով է առաջանում տնտեսական կախվածություն:

3.12.3. Կապակցված կողմերի միջև գործարքը ռեսուրսների կամ պարտավորությունների փոխանցում է կապակցված կողմերի միջև անկախ վճարի գանձումից: Այդպիսի գործարքների օրինակներ են՝

ա) ապրանքների, արտադրանքի (պատրաստի կամ անավարտ) գնում կամ վաճառք,

բ) այլ ակտիվների գնում կամ վաճառք.

գ) ծառայությունների մատուցում կամ ստացում,

դ) գործակալական համաձայնագրեր,

ե) վարձակալական համաձայնագրեր,

զ) հետազոտության և զարգացման աշխատանքների արդյունքների փոխանցում,

է) լիցենզային համաձայնագրեր,

ը) ֆինանսներ (ներառյալ վարկերը և կանոնադրական կապիտալում ներդրումները դրամական կամ բնաիրային տեսքով),

թ) երաշխիքներ, երաշխավորություններ և գրավներ,

ժ) կառավարման պայմանագրեր:

### 3.13 Սեկ բաժնետոմսին ընկնող շահույթ

3.13.1. Սեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթի կամ վնասի և այդ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվի հարաբերությունն է:


3.13.2. Սեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկման նպատակով սովորական բաժնետոմսերի տիրապետողներին վերագրվող տվյալ ժամանակաշրջանի զուտ շահույթը կամ վնասը ընդունվում է հավասար այդ ժամանակաշրջանի զուտ շահույթին կամ վնասին՝ հանած արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինները:

Արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինների գումարը իրենից ներկայացնում է.

I. տվյալ ժամանակաշրջանի համար հայտարարված ոչ կուտակման (ոչ կոմուլյատիվ) արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինների գումարը, և

II. տվյալ ժամանակաշրջանի համար հայտարարված կուտակման (կոմուլյատիվ) արտոնյալ բաժնետոմսերի գծով շահաբաժինների գումարը:

3.13.3. Սեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկման նպատակով սովորական բաժնետոմսերի թիվը ընդունվում է հավասար տվյալ ժամանակաշրջանի ընթացքում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կշռված միջին թվին (այսինքն՝ տվյալ ժամանակաշրջանի սկզբում շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի թվին հանած և (կամ) գումարած այդ ժամանակաշրջանի ընթացքում համապատասխանաբար հետ գնված կամ թողարկված սովորական բաժնետոմսերի թիվը՝ բազմապատկված ժամանակային կշռող գործակցով):

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	17/20

3.13.4. Սովորական բաժնետոմսերի՝ վերը նշված հաշվարկի մեջ ներառելու պահը որոշվում է դրանց տեղաբաշխման հետ կապված կոնկրետ պայմաններով, մասնավորապես՝ սովորական բաժնետոմսերը, որոնք տեղաբաշխված են դրամական միջոցներով վճարմամբ, ներառվում են հաշվարկի մեջ՝ սկսած դրանց դիմաց դեբիտորական պարտքի առաջացման ամսաթվից.

3.13.5. Սովորական բաժնետոմսերը, որոնք տեղաբաշխված են դրանց դիմաց մասնակի վճարմամբ, ներառվում են հաշվարկի մեջ այն չափով, որքանով դրանք իրավունք են տվել մասնակցելու սովորական բաժնետոմսերի դիմաց տրվող շահաբաժիններին համեմատած լրիվ վճարված սովորական բաժնետոմսերի հետ:

3.13.6. Սովորական բաժնետոմսերը, որոնք կտեղաբաշխվեն որոշակի պայմանների բավարարման դեպքում (պայմանականորեն տեղաբաշխվող բաժնետոմսեր), ընդգրկվում են հաշվարկում այն ամսաթվից, երբ անհրաժեշտ պայմանները բավարարված են:

3.13.7. Ընթացիկ և դրան նախորդող ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար բաժնետոմսերի թիվը պետք է ճշգրտվի, հաշվի առնելով բաժնետոմսերի թվի փոփոխությունները, որոնք տեղի են ունեցել առանց միջոցների (գուտ ակտիվների) համապատասխան փոփոխության (օրինակ՝ կապիտալացում, արտոնություններով թողարկում, բաժնետոմսերի տրոհում, բաժնետոմսերի միացում):

3.13.8. Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթը պետք է վերահաշվարկվի հետևյալ կերպ՝

ա) եթե շրջանառության մեջ գտնվող սովորական բաժնետոմսերի կամ պոտենցիալ սովորական բաժնետոմսերի թիվը մեծանում է կապիտալացման, բաժնետոմսերի ձևով շահաբաժինների վճարման կամ բաժնետոմսերի տրոհման արդյունքում, կամ էլ փոքրանում է բաժնետոմսերի միացման արդյունքում, ապա մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթի հաշվարկը բոլոր ներկայացված ժամանակաշրջանների համար պետք է հետընթաց ճշգրտվի.

բ) եթե այդ փոփոխությունները տեղի են ունենում հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, բայց նախքան ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, ապա այդ և բոլոր նախկին ժամանակաշրջանների համար ներկայացված ֆինանսական հաշվետվություններում մեկ բաժնետոմսին բաժին ընկնող շահույթի հաշվարկները պետք է հիմնվեն բաժնետոմսերի նոր թվի վրա.

գ) մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բազային շահույթը ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար պետք է ճշգրտվի, հաշվի առնելով՝

I. էական սխալները,

II. հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները,

III. իրենից բաժնեմասերի (շահերի) միացում ներկայացնող ձեռնարկատիրական գործունեության միավորման ազդեցությունները:

### **3.14. Էական սխալներ և փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ»**


3.14.1 Մեկ կամ ավելի նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ թույլ տված և հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված սխալները, որոնք հետևանք են թվաբանական անճշտությունների, հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում թույլ տված սխալների, փաստերի ոչ ճիշտ մեկնաբանման, խաբեության կամ անփութության, ենթակա են ուղղման, որպես կանոն, հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում:

3.14.2 Թույլ տված այն սխալները, որոնք ունեն այնպիսի նշանակալի հետևանքներ նախորդ ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունների վրա, որ դրանք չեն կարող այլևս արժանահավատ համարվել, համարվում են էական սխալներ:

3.14.3 Բանկը ընտրում է էական սխալների ուղղման հիմնական մոտեցման տարբերակը

Հիմնական մոտեցման դեպքում նախորդ ժամանակաշրջաններին վերաբերվող էական սխալների ուղղման գումարը պետք է արտացոլվի հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում, ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը: Այդ դեպքում համեմատելի տեղեկատվությունը պետք է վերաներկայացվի՝ քանի դեռ դա իրագործելի է:

3.14.4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կատարվի, երբ հաշվապահական հաշվառումը կարգավորող օրենսդրության մեջ տեղի են ունեցել փոփոխություններ, կամ թե այդ

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	18/20

փոփոխությունը նպաստում է Բանկի ֆինանսական հաշվետվություններում տնտեսական գործունեության դեպքերի և գործառնությունների առավել ճշգրիտ ներկայացմանը:

3.14.5. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը կիրառվում է հետընթաց կամ առաջընթաց կերպով:

- ✓ Հետընթաց կիրառումը բերում է տնտեսական գործունեության դեպքերի և գործարքների նկատմամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը դրանց ծագման ամսաթվից: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց, եթե նախորդ ժամանակաշրջանին վերաբերվող ցանկացած ճշգրտումից առաջացող գումար խելամտորեն որոշելի է:
- ✓ Առաջընթաց կիրառումը նշանակում է տնտեսական գործունեության այն դեպքերի և գործարքների նկատմամբ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառումը, որոնք տեղի են ունեցել փոփոխության ամսաթվից հետո: Այդ դեպքում նախորդ ժամանակաշրջանի հետ կապված ոչ մի ճշգրտում չի կատարվում՝ ոչ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի, ոչ էլ ընթացիկ ժամանակաշրջանի գուտ շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում, որովհետև գույություն ունեցող մնացորդները չեն վերահաշվարկվում: Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց, եթե նախորդ ժամանակաշրջանին վերաբերվող ցանկացած ճշգրտումից առաջացող գումար հնարավոր չէ խելամտորեն որոշել:

**3.15. Հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր**

3.15.1 Հաշվապահական հաշվառման ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերն այն բարենպաստ և ոչ բարենպաստ դեպքերն են, որոնք տեղի են ունենում հաշվապահական հաշվեկշի ամսաթվի և այն ամսաթվի միջև ընկած ժամանակաշրջանում, երբ ֆինանսական հաշվետվությունները վավերացվում (ստորագրվում) են ներկայացնելու (օրենսդրությամբ սահմանված հասցեներով) համար:

3.15.2. ՀՀՀՀՄ 10-ում տարբերակվում են հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերի երկու տեսակ.

ա) դեպքեր, որոնք հաստատում են հաշվապահական հաշվեկշի ամսաթվի դրությամբ գոյություն ունեցող պայմանները կամ իրավիճակը (հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցող ճշգրտող դեպքեր), և

բ) դեպքեր, որոնք ցույց են տալիս հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո առաջացած պայմանները կամ իրավիճակը (հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցող չճշգրտող դեպքեր):

3.15.3. Ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար վավերացման գործընթացը կարող է փոփոխվել կախված կառավարման կառուցվածքից, օրենսդրությամբ սահմանված պահանջներից, ինչպես նաև այն ընթացակարգերից, որոնց հետևում են ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս և ավարտին հասցնելիս: Ֆինանսական հաշվետվությունները համարվում են վավերացված դրանց սահմանված հասցեներով ներկայացման համար վավերացման ամսաթվի դրությամբ:


3.15.4. Հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքերը ներառում են ֆինանսական հաշվետվությունները ներկայացման համար վավերացնելու ամսաթվի դրությամբ տեղի ունեցած բոլոր դեպքերը, նույնիսկ, եթե մինչև հաշվետվությունների վավերացնելը շահույթը կամ ընտրված այլ ֆինանսական տեղեկատվություն արդեն ներկայացվել է:

3.15.5. Բանկը պետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցած ճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Ճշգրտող դեպքերի օրինակներ են հաշվապահական հաշվեկշի ամսաթվից հետո տեղի ունեցած

ա) դատարանի վճիռը, որը հաստատում է, որ Բանկն արդեն ուներ պարտավորություն հաշվապահական հաշվեկշի ամսաթվի դրությամբ,

բ) պատվիրատուի սնանկացումը, որը հաստատում է, որ հաշվապահական հաշվեկշի ամսաթվի դրությամբ արդեն գոյություն ուներ կորուստ՝ առևտրական դեբիտորական պարտքի գծով,

գ) կեղծիքների կամ սխալների հայտնաբերում, որոնք ցույց են տալիս, որ ֆինանսական հաշվետվությունները ճիշտ չեն:

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Ամսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	19/20

3.15.6. Սույն քաղաքականության 3.15.5 կետում նշված դեպքերում եթե էական սխալի գումարը, կախված տվյալ գործարքի կամ հողվածի չափից և բնույթից, չի գերազանցում Բանկի հաշվեկշռային ակտիվների հանրագումարի 1 տոկոսը և եթե այդ տեղեկատվության չբացահայտելը չի ազդելու օգտագործողների կողմից ֆինանսական հաշվետվությունների տվյալների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա, ապա նախորդ տարվա վերջին օրվա ամսաթվով կազմված հաշվապահական հաշվեկշռի մեջ փոփոխություններ չեն կատարվում:

3.15.7 Բանկը չպետք է ճշգրտի իր ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած չճշգրտող դեպքերն արտացոլելու նպատակով: Չճշգրտող դեպքերի օրինակներ են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո տեղի ունեցած՝

- ա) ակտիվների խոշոր գնումները և օտարումները կամ ակտիվների խոշոր բռնագրավումը պետության կողմից,
- բ) ակտիվների գների կամ արտարժույթի փոխարժեքների անսովոր խոշոր փոփոխությունները,
- գ) բնական աղետի և այլ արտակարգ դեպքերի հետևանքով արտադրական հզորությունների ոչնչացումը:

3.15.8. Եթե սեփական կապիտալի գործիքներ տիրապետողների շահաբաժինները առաջադրված կամ հայտարարված են հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո, կազմակերպությունը չպետք է ճանաչի այդ շահաբաժինները որպես պարտավորություն՝ հաշվապահական հաշվեկշռի ամսաթվի դրությամբ, այլ պետք է բացահայտի հաշվապահական հաշվեկշռում՝ որպես սեփական կապիտալի առանձին բաղադրիչ, կամ՝ ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում:

3.15.9. Բանկը չպետք է պատրաստի իր ֆինանսական հաշվետվություններն անընդհատության հիմունքով, եթե ղեկավարությունը հաշվապահական հաշվեկշռի ամսաթվից հետո որոշում է, որ մտադիր է լուծարել կազմակերպությունը կամ դադարեցնել գործունեությունը, կամ էլ չունի այլ կերպ վարվելու իրատեսական այլընտրանք:

Եթե անընդհատության սկզբունքի կիրառումն այլևս տեղին չէ, դրա ազդեցությունն այնքան զգալի է, որ ստանդարտը պահանջում է արմատական փոփոխություն հաշվապահական հաշվառման հիմունքներում և ոչ թե հաշվապահական հաշվառման նախկինում կիրառված հիմունքների համաձայն ճանաչված գումարների ճշգրտում:

### **3.16. Հաշվարկներ բանկի և մասնաճյուղերի միջև**


3.16.1. Բանկի գլխամասային գրասենյակի և ոչ միասնական սերվերով աշխատող մասնաճյուղերի միջև հաշվի քաղվածքների մնացորդների համադրման նպատակով ինչպես նաև հետագա վերահսկողության համար, գլխամասային բանկը այդ մասնաճյուղերից յուրաքանչյուր աշխատանքային օր ստանում է տվյալ աշխատանքային օրվա համար ուղարկված հաշվի քաղվածքի մնացորդների հաստատումները՝ էլեկտրոնային կապի կամ թղթային եղանակով:

3.16.2 Յուրաքանչյուր շաբաթվա և ամսվա վերջին աշխատանքային օրերի դրությամբ դրանց հաջորդող աշխատանքային օրը պարբերաբար կատարվում է բանկի գլխամասային գրասենյակի և ոչ միասնական սերվերով աշխատող մասնաճյուղերի թիվ 1811 և 3811 հաշվեկշռային հաշիվների միջև ըստ արժույթների մնացորդների/ առկայության դեպքում/ փակում: Յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրերի դրությամբ դրանց հաջորդող աշխատանքային օրը պարբերաբար կատարվում է նաև տարբեր արժույթների մնացորդների փակում տվյալ օրվա ՀՀ ԿԲ փոխարժեքով:

3.16.3 Բանկի ամփոփ հաշվեկշռային հաշվետվությունը յուրաքանչյուր աշխատանքային օր ինչպես նաև սահմանված ժամկետներում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու կամ հրապարակելու ժամանակ բանկի գլխամասային գրասենյակի և ոչ միասնական սերվերով աշխատող մասնաճյուղերի միջև հաշիվների քաղվածքների մնացորդները ենթարկվում են զրոյացման սահմանված ձևով:

### **3.17. Սույն քաղաքականության խախտման համար տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների պատասխանատվությունը**

3.17.1 Սույն քաղաքականությամբ սահմանված դրույթների ոչ պատշաճ կատարումն առաջացնում է կարգապահական պատասխանատվություն ՀՀ աշխատանքային օրենսգրքին, «Բանկի աշխատակիցներին

	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ	QP 53-03		
	<b>Հաշվապահական հաշվառման քաղաքականություն</b>	<i>Անսաթիվ</i> 11.01.2007	<i>Խմբագրություն</i> 1	20/20

աշխատանքային կարգապահությունը խախտելու համար տույժի ենթարկելու մասին» հրահանգով՝ IN 62-04 սահմանված պաշտոնական հրահանգների դրույթներին համապատասխան: